Պրոֆեսոր Մարցիս Աուզինշ (Լատվիայի համալսարան)

Մարցիս Աուզինշը պաշտպանել է իր թեկնածուական ատենախոսությունը 1986-ին Լենինգրադի պետական համալսարանում, որից հետո անցել է աշխատանքի Լատվիայի համալսարանի Ֆիզիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետում, որտեղ էլ հետագայում զբաղեցրել է Ֆիզիկայի ամբիոնի վարիչի (1997-2002), Ատոմային ֆիզիկայի և սպեկտրասկոպիայի ինդտիտուտի տնօրենի (1998-2003) և Ֆիզիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետի դեկանի (2002-2007) պաշտոնները: 1998-ից մինչև 2007-ը եղել է Լատվիայի համալսարանի Սենատի նախագահ, իսկ 2007-ից 2015-ը՝ Լատվիայի համալսարանի ռեկտոր: Այժմ նա աշխատում է նույն համալսարանում որպես ֆիզիկայի պրոֆեսոր: 2022-ից Մարցիս Աուզինշը Լատվիայի համալսարանի Խորհրդի անդամ է:

Եղել է հրավիրված հետազոտող և պրոֆեսոր մի շարք հանրահայտ համալսարաններում (Թագավորական ընկերության պրոֆեսոր Սասեքսի համալսարանում 1995-ին, հետազոտող Բիլեֆելդի համալսարանում 1996-1997-ին, պրոֆեսոր Օկլահոմայի համալսարանում 1998-ին, Կալիֆորնիայի Բերկլիի համալսարանում 2005-ին և 2016-ին):

Նրա հարյուրից ավելի գիտական հոդվածները տպագրվել են բարձր հեղինակությամբ միջազգային հանդեսներում, իսկ առավել արժեքավոր արդյունքներն ամփոփվել են երկու մենագրություններում՝ Optical Polarization of Molecules (Cambridge University Press, 1995, 2005) և Optically Polarized Atoms: Understanding Light-Atom Interactions (Oxford University Press, 2010):

Մարցիս Աուզինշի գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է ատոմային և մոլեկուլային ֆիզիկան, քվանտային օպտիկան, ատոմների և փոքր մոլեկուլների լազերային սպեկտրասկոպիան: 2002-ին նա հիմնել է Լատվիայի համալսարանի Լազերային կենտրոնը:

Մարցիս Աուզինշը ավելի քան 20 տարի սերտորեն համագործակցում է ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի գիտնականների հետ, տպագրվել է տասնյակից ավելի համատեղ գիտական հոդված: